ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԷՆԵՐԳԵՏԻԿԱՅԻ ԵՎ ԲՆԱԿԱՆ ՊԱՇԱՐՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

# ԵՐԵՎԱՆԻ ՋԵՐՄԱԷԼԵԿՏՐԱԿԵՆՏՐՈՆ

ՓԱԿ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ

0053, ԵՐԵՎԱՆ, ԱՐԻՆ ԲԵՐԴԻ 3 ՆՐԲԱՆՑՔ, 3 :

ՀԵՌ.  +374 10 472 760
ՖԱՔՍ +374 10 434 412;  +374 10 472 771
Էլեկտրոնային փոստ  mailbox@yccpp.com

No: 76

13. 02 . 2014թ

<<Շրջանակային համաձայնագրերով տնտեսական սանհիգիենիկ և լվացքի միջոցների գնման մասին>>

«ԳԱԿ-ՇՀԱՊՁԲ-11/11» ծածկագրով շրջանակային համաձայնագրերի միջոցով գնում կատարելու ընթացակարգի հնարավոր մասնակիցների ղեկավարներին

Հարգելի մասնակից

«ԳԱԿ-ՇՀԱՊՁԲ-11/11» ծածկագրով ընթացակարգի շրջանակներում <<Երևանի ՋԷԿ>> ՓԲԸ-ի կարիքների համար անհրաժեշտություն է առաջացել ձեռքբերելու «Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ի և Ձեր միջև կնքված շրջանակային համաձայնագրով նախատեսված տնտեսական, սանհիգիենիկ և լվացքի միջոցներ:

Սույն հրավերի (ծանուցման) ծածկագիրն է հանդիսանում **«ԵՐՋԷԿ ՇՀԱՊՁԲ 11/11-14/3»**:

Հայտնում ենք, որ գնման առարկայի վերաբերյալ Ձեր կազմակերպության հայտն անհրաժեշտ է ներկայացնել <<Երևանի ՋԷԿ>> ՓԲԸ-ը, հասցեն՝ ք.Երևան, Արին բերդի 3-րդ նրբանցք, թիվ 3 հասցեով մինչև 2014թ. փետրվարի 25-ը, ժամը 14:00-ն: Ընթացակարգի հայտերը ստանում և հայտերի գրանցամատյանում գրանցում է հանձնաժողովի քարտուղար Արմեն Պետրոսյանը: Հայտերը քարտուղարի կողմից գրանցվում են գրանցամատյանում ըստ ստացման հերթականության՝ ծրարի վրա նշելով գրանցման համարը, օրը և ժամը:

Հայտերը կբացվեն <<Երևանի ՋԷԿ>> ՓԲԸ-ում, հասցեն՝ ք.Երևան, Արին բերդի 3-րդ նրբանցք, թիվ 3, 2014թ. փետրվարի 25-ին, ժամը 14:00-ին:

Գնման առարկա է հանդիսանում <<Երևանի ՋԷԿ>> ՓԲԸ կարիքների համար տնտեսական, սանհիգիենիկ և լվացքի միջոցների ձեռքբերումը:

<<Երևանի ՋԷԿ>> ՓԲԸ-ի կարիքների համար՝ տնտեսական, սանհիգիենիկ և լվացքի միջոցների (որը կազմված է 15 չափաբաժնից) տեխնիկական բնութագիրը, ինչպես նաև գնման առարկայի մասնագիրը, տեխնիկական տվյալները և այլ ոչ գնային պայմանների ամբողջական և համարժեք նկարագրությունը կազմում են պայմանագրի անբաժանելի մասը, որի նախագիծը ներկայացված է սույն հրավերի (ծանուցման) N 1.1 հավելվածում: Հայտերը կգնահատվեն ըստ չափաբաժինների:

Մասնակիցները հայտով ներկայացնում են իրենց կողմից հաստատված՝

ա. գնման ընթացակարգին մասնակցելու դիմում (հավելված N5), ընդ որում պարտադիր է նշել Մասնակցի էլեկտրոնային փոստի հասցեն,

բ. գնային առաջարկ (հավելված N5.1)։ Մասնակցի գնային առաջարկը ներկայացվում է ինքնարժեք և ավելացված արժեքի հարկ ընդհանրական բաղադրիչներից բաղկացած հաշվարկի ձևով։

Հայտն անհրաժեշտ է ներկայացնել «ԳԱԿ-ԾՀԱՊՁԲ-11/11» ընթացակարգի հրավերով սահմանված կարգով։

Կից ներկայացնում ենք կնքվելիք պայմանագրերի նախագիծը։

Մասնակցի կողմից հայտի ներկայացումը պարտադիր չէ։

<<Երևանի ՋԷԿ>> ՓԲԸ-ի էլեկտրոնային փոստի հասցեն է՝ purchase@yccpp.com։

Եթե, Հրամանով հաստատված ցանկում ներառված կոնկրետ գնման գործընթացի մասով, Հայաստանի Հանրապետության նորմատիվ իրավական ակտով նախատեսված է, որ մասնակիցը Օրենքի 5-րդ հոդվածով նախատեսված պահանջներին իր տվյալների համապատասխանության ապահովման և/կամ գնահատման համար պետք է պատվիրատուին ներկայացնի այլ (լրացուցիչ) փաստաթղթեր և/կամ տվյալներ, ապա նշված փաստաթղթերը և/կամ տվյալները պատվիրատուին ներկայացնում է ընտրված մասնակիցը՝ մինչև կարգի 110-րդ 7-րդ մասով սահմանված կարգով պայմանագրի կնքումը։ Ընդ որում՝

- նման փաստաթղթերի և/կամ տվյալների ներկայացման և գնահատման կարգը սահմանվում է շրջանակային համաձայնագրով՝ հիմք ընդունելով Օրենքի 31-րդ հոդվածի 5-րդ մասի և կարգի 75-րդ կետի պահանջները,
- նման պահանջի դեպքում, մասնակիցներից պահանջվող փաստաթղթերի ցանկը և վավերապայմանները, ինչպես նաև մասնակցության իրավունքի և որակավորման գնահատման կարգը պետք է նախատեսված լինի շրջանակային համաձայնագրեր կնքած մասնակիցներին պատվիրատուի կողմից ուղարկվող հրավերով (ծանուցումով)՝ հղում կատարելով Հայաստանի Հանրապետության նորմատիվ իրավական ակտի համապատասխան (կոնկրետ) դրույթին ի կատարումն որի պահանջվում են լրացուցիչ փաստաթղթերը և/կամ տվյալները։

Այոլիր 16 էջ։

Հարգանքով

Գնումների համակարգող՝<br>
Պայմանագրային բաժնի<br>
առաջատար մասնագետ — Ա. Պետրոսյան

Հավելված 1
**«ԵՐՋԷԿ-ԾՀԱՊՁԲ 11/11-14/3» ծածկագրով**
***ընթացակարգի հրավերի***
***N ................................ ծածկագրով***
ընթացակարգի գնահատող հանձնաժողովին

**ԳՆՄԱՆ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԻՆ ՄԱՍՆԱԿՑԵԼՈՒ**
**ԴԻՄՈՒՄ**

...................................................-ն հայտնում է, որ ցանկություն ունի մասնակցելու
Ընթացակարգի մասնակցի անվանումը (անունը)

<<Երևանի ՋԷԿ>> ՓԲԸ-ի կողմից N ԵՐՋԷԿ-ԾՀԱՊՁԲ 11/11-14/3 ծածկագրով հայտարարված ընթացակարգի ................................................ չափաբաժնին
չափաբաժնի (չափաբաժինների) համարը

(չափաբաժիններին) և հրավերի (ծանուցման) պահանջներին համապատասխան ներկայացնում է հայտը:

...................................................-ն հայտնում և հավաստում է, որ իր հիմնադրի
Ընթացակարգի մասնակցի անվանումը (անունը)

կողմից հիմնադրված կամ ավելի քան հիսուն տոկոս իր հիմնադրին պատկանող բաժնեմաս ունեցող կազմակերպությունների միաժամանակյա մասնակցությունը սույն ընթացակարգին բացառվում է, բացառությամբ՝

1) պետության կամ համայնքների կողմից հիմնադրված կազմակերպությունների,

2) համատեղ գործունեության կարգով (կոնսորցիումով) մասնակցության դեպքերի:

...................................................-ն հայտնում և հավաստում է, որ չունի գերիշխող
Ընթացակարգի մասնակցի անվանումը (անունը)

դիրքի չարաշահում և հակամրցակցային համաձայնություն:

...................................................-ի էլեկտրոնային փոստի հասցեն է՝
Ընթացակարգի մասնակցի անվանումը (անունը)

...................................................:
Մասնակցի էլեկտրոնային փոստի հասցե

................................................... ...................................
Մասնակցի անվանումը (անունը) (ղեկավարի պաշտոնը, Անուն Ազգանունը) (ստորագրությունը)

Կ. Տ.

«........» ................ 20.....թ.
(ամսաթիվը, ամիսը)

Հավելված 2
**«ԵՐՋԷԿ-ՇՀԱՊՁԲ 11/11-14/3» ծածկագրով**
*ընթացակարգի հրավերի*
***N «ԵՐՋԷԿ-ՇՀԱՊՁԲ 11/11-14/3» ծածկագրով***
ընթացակարգի գնահատող հանձնաժողովին

# Գ ն ի   ա ռ ա ջ ա ր կ

Ուսումնասիրելով Ձեր կողմից տրամադրված N ԵՐՋԷԿ-ՇՀԱՊՁԲ 11/1-14/2 ծածկագրով ընթացակարգի հրավերը (ծանուցումը),այդ թվում՝ կնքվելիք պայմանագրի նախագիծը, ______________-ն առաջարկում է

Ընթացակարգի մասնակցի անվանումը (անունը)

պայմանագիրը կատարել համաձայն հետևյալ գների՝

| Չափա-բաժինների համարները | Գնման առարկայի անվանումը | Արժեք* | ԱԱՀ** | Պայամանագրի կատարման համար առաջարկված գինը /պառերով և թվերով/ |
|---|---|---|---|---|
| 1 | 2 | 3 | 4 | 5=3+4 |
| 1 | | | | |
| 2 | | | | |
| 3 | | | | |
| 4 | | | | |
| 5 | | | | |
| 6 | | | | |
| 7 | | | | |
| 8 | | | | |
| 9 | | | | |
| 10 | | | | |
| 11 | | | | |
| 12 | | | | |
| 13 | | | | |
| 14 | | | | |
| 15 | | | | |

****3-րդ սունյակում նշված «Արժեքը» ներառում է ինքնարժեքը և շահույթը:***

****Եթե մասնակիցն ավելացված արժեքի հարկ վճարող է, ապա փվյալ պայմանագրի գծով Հայաստանի Հանրապետության պետական բյուջե վճարվելիք ավելացված արժեքի հարկի գումարը նշվում է 4-րդ սունյակում:.***

______________________________
Մասնակցի անվանումը (անունը) (ղեկավարի պաշտոնը, Անուն Ազգանունը)

______________
(ստորագրությունը)

Կ. Տ.

«____» __________ 20___թ.
(ամսաթիվը, ամիսը)

Հավելված 1.1
Նախագիծ

# ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ
## Տնտեսական, սանհիգիենիկ և լվացքի միջոցների
## N ԵՐՋԷԿ-ՇՀԱՊՁԲ 14/2

ք. Երևան «  » ---------------- 2014 թ.

<<Երևանի ՋԷԿ>> ՓԲԸ-ն, ի դեմս գլխավոր տնօրեն Հ. Հովհաննիսյանի, որը գործում է ընկերության կանոնադրության հիման վրա, (այսուհետ՝ Գնորդ), մի կողմից, և -----------------------ն, ի դեմս Ընկերության տնօրեն -------------------------ի (այսուհետև՝ վաճառող), մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

**1. Պայմանագրի առարկան**

1.1 Վաճառողը պարտավորվում է սույն պայմանագրով սահմանված կարգով, նախատեսված ծավալներով, ձևով և ժամկետներում Գնորդին կամ նրա կողմից Ստացողին հանձնել սույն պայմանագրի N 1 հավելվածով՝ Տեխնիկական բնութագրով նախատեսված տնտեսական, սանհիգիենիկ և լվացքի միջոցներ (այսուհետև՝ Ապրանք), իսկ Գնորդը պարտավորվում է ընդունել այդ Ապրանքը և այդ նպատակով համապատասխան ֆինանսական միջոցներ նախատեսելու դեպքում վճարել դրա համար:

**2. Մատակարարման պայմանները**

2.1 Վաճառողն Ապրանքը հասցնում է Գնորդին, ք. Երևան, Արին Բերդի 3-րդ նրբանցք, թիվ 3:

2.2. Մատակարարումները կատարվում է միայն **Գնորդի հայտերի հիման** վրա:

2.2 Ապրանքը մատակարարվում է, սույն պայմանագրի N 2 հավելվածով սահմանված գնման ժամանակացույցին համապատասխան և ժամկետը սահմանվում է առնվազն երեսուն աշխատանքային օր, որի հաշվարկը կատարվում է սույն պայմանագիրը կնքելու օրվանից, բացառությամբ այն դեպքերի, երբ Վաճառողը համաձայնում է պայմանագիրը կատարել ավելի կարճ ժամկետում:

**3.Կողմերի իրավունքները և պարտականությունները**

**3.1 Գնորդն իրավունք ունի՝**

3.1.1 Ապրանքը Պայմանագրով սահմանված ժամկետում Վաճառողի կողմից չմատակարարվելու դեպքում հրաժարվել Ապրանքից:

3.1.2 Եթե հանձնվել է ոչ պատշաճ որակի՝ սույն պայմանագրի 1 կետում նշված տեխնիկական բնութագրերին չհամապատասխանող Ապրանք.

ա ) Չընդունել Ապրանքը՝ իր հայեցողությամբ սահմանել ոչ պատշաճ որակի Ապրանքը սույն պայմանագրին համապատասխանող որակի Ապրանքով անհատույց փոխարինման ողջամիտ ժամկետ և պահանջել Վաճառողից վճարելու սույն պայմանագրի 7.3 կետով նախատեսված տուգանքը, ինչպես նաև 7.2 կետով նախատեսված տույժը.

բ) Հրաժարվել սույն պայմանագիրը կատարելուց և պահանջել վերադարձնելու Ապրանքի համար վճարված գումարը:

3.1.3 Վաճառողից պահանջել հատուցելու վնասները, եթե Գնորդը Վաճառողի կողմից պարտավորությունը խախտելու հետևանքով պայմանագրի լուծումից հետո ողջամիտ ժամկետում այլ անձից ավելի բարձր, սակայն ողջամիտ գնով գնել է Ապրանք՝ սույն պայմանագրով նախատեսվածի փոխարեն՝ Պայմանագրով սահմանված և դրա փոխարեն կնքված գործարքի գների միջև տարբերության չափով, ինչպես նաև Ապրանքն այլ անձից ձեռք բերելու համար իր կատարած բոլոր անհրաժեշտ և ողջամիտ ծախսերը:

3.1.4 Միակողմանի լուծել սույն պայմանագիրը (լրիվ կամ մասնակի), եթե Վաճառողն էականորեն խախտել է սույն պայմանագիրը.

3.1.4.1 Վաճառողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) մատակարարվել է ոչ պատշաճ որակի Ապրանք, որը չի կարող փոխարինվել Գնորդի համար ընդունելի ժամկետում.

բ) խախտվել է Ապրանքի մատակարարման ժամկետը:

3.1.5 Զննել Ապրանքը և հայտնաբերված թերությունների մասին անհապաղ տեղեկացնեղ Վաճառողին.

**3.2 Գնորդը պարտավոր է՝**

3.2.1 Կատարել սույն պայմանագրին համապատասխան մատակարարված Ապրանքների ընդունում

ապահովող բոլոր անհրաժեշտ գործողությունները:

3.2.2 Վաճառողի հանձնած Ապրանքից սույն պայմանագրին համապատասխան հրաժարվելու դեպքում, ապահովել այդ Ապրանքի պատասխանատու պահպանությունը և դրա մասին անհապաղ տեղեկացնել Վաճառողին.

3.2.3 Սույն պայմանագրով նախատեսված կարգով և ժամկետներում իրականացնել վճարումները,

3.2.4 Ապրանքի քանակի, տեսականու, որակի մասին սույն պայմանագրի պայմանները խախտելու մասին Վաճառողին ծանուցել թերությունը հայտնաբերելուց հետո անմիջապես կամ այն բանից հետո՝ ողջամիտ ժամկետում, երբ պայմանագրի համապատասխան պայմանի խախտումը պետք է հայտնաբերված լիներ՝ ելնելով Ապրանքի բնույթից և նշանակությունից:

**3.3 Վաճառողն իրավունք ունի**

3.3.1 Գնորդից պահանջել ընդունելու սույն պայմանագրով նախատեսված կարգով և ժամկետներում մատակարարված Ապրանքը.

3.3.2 Գնորդից պահանջել հատուցելու վնասները, եթե Վաճառողը Գնորդի կողմից պարտավորությունը խախտելու հետևանքով պայմանագրի լուծումից հետո՝ ողջամիտ ժամկետում, այլ անձի՝ Պայմանագրով նախատեսվածից ավելի ցածր, սակայն ողջամիտ գնով վաճառել է Ապրանք՝ համապատասխան Պայմանագրով սահմանված և դրա փոխարեն կնքված գործարքի գների միջև տարբերության չափով:

3.3.3 Գնորդից պահանջել վճարելու Պայմանագրով նախատեսված կարգով և ժամկետներում մատակարարված Ապրանքի համար իրեն վճարման ենթակա գումարները.

3.3.4 Գնորդի համաձայնությամբ վաղաժամկետ մատակարարել Ապրանքը: Վաղաժամկետ մատակարարված և Գնորդի կողմից ընդունված Ապրանքը հաշվարկվում է հաջորդ փուլում մատակարարման ենթակա Ապրանքի քանակի հաշվին:

3.3.5 Սույն պայմանագրի մինչև 25 տոկոսը կարող է իրականացվել գործակալության պայմանագիր կնքելու միջոցով: Գործակալության պայմանագրի կողմի չի կարող հանդիսանալ տվյալ ընթացակարգում հաղթող ճանաչված, սակայն պայմանագրի կնքելուց հրաժարված մասնակիցը:

**3.4 Վաճառողը պարտավոր է՝**

3.4.1 Գնորդին հանձնել Ապրանքը՝ սույն պայմանագրով նախատեսված կարգով և ժամկետներում:

3.4.2 Գնորդին հանձնել երրորդ անձանց իրավունքներից ազատ Ապրանք:

3.4.3 Գնորդի պահանջով տրամադրել Ապրանքի որակը հավաստող՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված փաստաթղթեր:

3.4.4 Հետ տանել Գնորդի կողմից սույն պայմանագրի 3.2.2 կետին համապատասխան՝ պատասխանատու պահպանության ընդունված Ապրանքը կամ ողջամիտ ժամկետում տնօրինել այն, ինչպես նաև հատուցել Ապրանքը պատասխանատու պահպանության ընդունելու, այն իրացնելու կամ Վաճառողին վերադարձնելու հետ կապված անհրաժեշտ ծախսերը:

3.4.5 Սույն պայմանագրով նախատեսված դեպքում վճարել սույն պայմանագրի 7.2. և 7.3. կետերով նախատեսված տույժը և տուգանքը:

3.4.6 Գնորդին հանձնել Ապրանքի պատկանելիքները և համապատասխան փաստաթղթերը:

3.4.7. Սույն Պայմանագրի 3.1.4 կետի համաձայն Պայմանագրի լուծումից հետո Գնորդին հատուցել վերջինիս վնասները:

3.4.8 Սույն պայմանագրի կատարման (կանխավճարի) ապահովման գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել պատվիրատուին:

**4.ԱՊՐԱՆՔԻ ԳԻՆԸ և ՎՃԱՐՄԱՆ ԿԱՐԳԸ**

4.1 Սույն պայմանագրի ընդհանուր գինը կազմում է ______________________ (______________________) ՀՀ դրամ՝ ներառյալ ԱԱՀ-ն: Յուրաքանչյուր ապրանքատեսակի միավորի գինը սահմանված է սույն Պայմանագրի N2 հավելվածում: Ապրանքի գինը ներառում է հարկերը, տուրքերը և ՀՀ օրենսդրությամբ սահմանված այլ վճարները:

4.2 Գնորդն իրեն մատակարարված Ապրանքի դիմաց վճարում է անկանխիկ՝ դրամական միջոցները Վաճառողի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձնման-ընդունման արձանագրության հիման վրա N 3 հավելվածով՝ (որը կահմանվի լրացուցիչ համաձայնագրով անհրաժեշտ ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում)՝ վճարման ժամանակացույցով նախատեսված ամսում, (եթե արձանագրությունը կազմվում է տվյալ ամսվա 20-ից հետո, ապա վճարումը կատարվում է 20 բանկային օրվա ընթացքում), բայց ոչ ավելի, քան նույն հավելվածով՝ վճարման ժամանակացույցով տվյալ ժամանակահատվածի համար նախատեսված գումարի չափից: Եթե ընդունված Ապրանքի համար վճարելու վճարման ժամանակացույցով նախատեսված միջոցները չեն բավարարում, ապա վճարումն սույն կետի պայմաններով իրականացվում է այն ամսում , որում դրամական միջոցները բավարարում են:

## 5. Ապրանքի որակը և երաշխիքը

5.1 Վաճառողը երաշխավորում է մատակարարված Ապրանքի որակի համար:

5.2 Հիմնական միջոց հանդիսացող ապրանքների գնման դեպքում երաշխիքային ժամկետ է սահմանվում Գնորդի կողմից ապրանքն ընդունվելու օրվան հաջորդող օրվանից հաշված առնվազն 365 օրացուցային օրը:

5.2.1 Եթե երաշխիքային ժամկետի ընթացքում ի հայտ են եկել թերություններ, ապա Վաճառողը պարտավոր է իր հաշվին, Գնորդի կողմից սահմանված ողջամիտ ժամկետում վերացնել թերությունները:

## 6. Ապրանքի հանձնումը և ընդունումը

6.1 Պայմանագրի կամ դրա մի մասի կատարման արդյունքներն ընդունվում են Գնորդի և Վաճառողի միջև հանձնման-ընդունման արձանագրության (այսուհետ՝ արձանագրություն) ստորագրմամբ: Վաճառողը՝ Ապրանքի հանձնման ավարտից 2 աշխատանքային օրվա ընթացքում Գնորդին է ներկայացնում հանձնած Ապրանքի մասին իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրության երկու օրինակ (Հավելված N4):

6.2. Արձանագրությունն ստորագրվում է, եթե մատակարարված ապրանքը համապատասխանում է պայմանագրի պայմաններին: Հակառակ դեպքում պայմանագրի կամ դրա մի մասի կատարման արդյունքները չեն ընդունվում, արձանագրություն չի ստորագրվում և պատվիրատուն՝

ա) հարցի կարգավորման համար ձեռնարկում է նման իրավիճակի համար սույն պայմանագրով նախատեսված միջոցները.

բ) վաճառողի նկատմամբ կիրառում է սույն պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

6.3 Գնորդը հանձնման-ընդունման արձանագրությունը ստանալու պահից տասնօրյա ժամկետում Վաճառողին է ներկայացնում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրության մեկ օրինակը կամ Ապրանքը չընդունելու պատճառաբանված մերժումը:

## 7. Կողմերի պատասխանատվությունը

7.1 Վաճառողը պատասխանատվություն է կրում հանձնած Ապրանքի որակի և Պայմանագրով նախատեսված մատակարարման ժամկետների պահպանման համար:

7.2 Վաճառողի կողմից սույն պայմանագրով ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու դեպքում գանձվում է տույժ 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերրորդական) տոկոսի չափով, որը հաշվարկվում է օրացուցային օրերով՝ պայմանագրի չկատարված մասի գնի նկատմամբ:

7.3 Սույն պայմանագրի 1 կետում նշված Տեխնիկական բնութագրին չհամապատասխանող Ապրանք մատակարարելու յուրաքանչյուր դեպքում Վաճառողից գանձվում է տուգանք՝ Պայմանագրի ընդհանուր գնի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով:

7.4 Սույն պայմանագրի 7.2 և 7.3 կետերով նախատեսված տույժը տուգանքը հաշվարկվում և հաշվանցվում են Վաճառողին վճարման ենթակա գումարներից:

7.5 Սույն պայմանագրով չնախատեսված դեպքում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվություն են կրում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

7.6 Տույժերի վճարումը Կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորությունները լրիվ կատարելուց:

## 8. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Սույն պայմանագրով և սույն պայմանագրի հիման վրա կնքված Համաձայնագրերով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը Կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

## 9. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

9.1 Հիմք ընդունելով Գնումների մասին ՀՀ օրենքի 14-րդ հոդվածի 7-րդ կետը՝ մինչև ֆինանսական միջոցներ նախատեսելը, սույն օրենքով սահմանված կարգով կարող է կնքվել պայմանագիր՝ պայմանով, որ դրա շրջանակներում գնում կարող է կատարվել անհրաժեշտ ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում: Նույն կետի համաձայն՝ կնքված պայմանագիրը լուծարվում է, եթե այն կնքելու օրվան հաջորդող տարվա ընթացքում

պայմանագրի կատարման համար ֆինանսական միջոցները չեն նախատեսվել:

9.2 Սույն պայմանագիրը համարվում է կնքված Կողմերի ստորագրման պահից և ուժի մեջ է մտնում գնումն իրականացնելու համար պահանջվող ֆինանասական միջոցներ նախատեսվելու դեպքում և վճարման կարգը (N3 հավելվածը) սահմանող տվյալ պայմանագրի անբաժանելի մասը կազմող համաձայնագրի ստորագրման պահից:

9.3 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության պահանջների կատարման նկատմամբ հսկողության և (կամ) վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Վաճառողը ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ Վաճառողին հաղթող ճանաչելու (ընտրելու) մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա, այդ հիմքերն ի հայտ գալուց հետո, Գնորդը իրավունք ունի միակողմանիորեն լուծելու գնման պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Գնորդը չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Վաճառողի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ Կատարողը պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Գնորդի կրած վնասներն այն ծավալով, որը չի ծածկվում մինչև լուծումը գնման պայմանագրի կատարմամբ Գնորդի ստացածով:

9.4 Սույն պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ նոր պայմանագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա սույն պայմանագրի անբաժանելի մասը:

Սույն պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝

1) Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով տվյալ գնումը կատարելու համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով տվյալ գնումը կատարելու համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցում:

Սույն պայմանագրում, իսկ եթե պայմանագրի գինը գործոնային է, ապա նաև այդ պայմանագրին կից հաջորդող յուրաքանչյուր տարիներին կնքված համաձայնագրում, չի կարող կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող ապրանքների ծավալների, ձեռք բերվող գնման առարկաների միավորի գնի կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Ապրանքի մատակարարման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև այդ ժամկետը լրանալը պայմանագրի կողմի առաջարկության առկայության դեպքում՝ պայմանով, որ՝ Գնորդի մոտ չի վերացել գնման առարկայի օգտագործման պահանջը:

9.5 Սույն Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Կատարող և (կամ) Պատվիրատու) օգուտները (խնայողություններ) և (կամ) կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Սույն պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Վաճառողի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է պատվիրատուի հետ պայմանագիր կնքած անձը:

9.6 Սույն պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով:
Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են ՀՀ դատարաններում:

9.7 Սույն պայմանագիրը կազմված է ___ էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Սույն պայմանագրի N 1, 2, 3, և 4 հավելվածները՝ բաղկացած 4 թերթից հանդիսանում են պայմանագրի անբաժանելի մասը, յուրաքանչյուր կողմին տրվում է պայմանագրի մեկ օրինակ:

9.8 Սույն պայմանագրից ծագած կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Սույն պայմանագրից ծագած պահանջի իրավունք չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

9.9 Սույն Պայմանագրի նկատմամբ կիրառվում է ՀՀ իրավունքը:

**11 Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները**

| ԳՆՈՐԴ | ՎԱՃԱՌՈՂ |
|---|---|
| <<Երևանի ՋԷԿ>> ՓԲԸ | |
| ք. Երևան, Արին Բերդի 3-րդ նրբ, 3 | |

ՀՎՀՀ 02205028
Հ/Հ 2473600002170010
<<Արդշինինվեստ բանկ>> ՓԲԸ
Շենգավիթ մասնաճյուղ

Գլխավոր տնօրեն՝

------------------------------
(ստորագրություն)
Կ.Տ

------------------------------
(ստորագրություն)
Կ.Տ

Հավելված 1
___ __________ 2014թ. կնքված
պայմանագրի

**Տեխնիկական բնութագիր**

տնտեսական, սանհիգիենիկ և լվացքի միջոցների

| Չափաբաժնի համարը | Ապրանքի անվանումը | Չափման միավորը | քանակը | Տեխնիկական բնութագիրը |
|---|---|---|---|---|
| 1 | Օճառ | հատ | 12 | **Չորսուների ձևերով 100 գ**, որակական թիվը (ճարպաթթուների զանգվածը վերահաշվարկված 100 գ կտորի անվանական զանգվածի համար) ոչ պակաս 78 գ, սոդայանյութերի զանգվածային (վերահաշվարկված ըստ $Na_2O$) մասը ոչ ավելի՝ 0,2 %, օճառից անջատված ճարպաթթուների պնդեցման ջերմաստիճանը (տիտրը)՝ (36-41) °C, նատրիումի քլորիդի զանգվածային մասը՝ 0,4 %-ից ոչ ավելի, անվտանգությունը՝ ըստ ՀՀ առողջապահության նախարարի 2005թ. նոյեմբերի 24-ի N 1109-Ն հրամանով հաստատված «N 2-III-8.2 օծանելիքակոսմետիկական արտադրանքի արտադրությանը և անվտանգությանը ներկայացվող հիգիենիկ պահանջներ» սանիտարական կանոնների և նորմերի, մակնշումը և փաթեթավորումը: |
| | | հատ | 240 | **Հեղուկ օճառ Հոբբի կամ ռուսական արտադրության նրան համարժեք- 400 մլ տարաներով**, անվտանգությունը՝ ըստ ՀՀ առողջապահության նախարարի 2005թ. նոյեմբերի 24-ի N 1109-Ն հրամանով հաստատված «N 2-III-8.2 օծանելիքակոսմետիկական արտադրանքի արտադրությանը և անվտանգությանը ներկայացվող հիգիենիկ պահանջներ» սանիտարական կանոնների և նորմերի, մակնշումը և փաթեթավորումը: |
| 2 | Լվացող մաքրող նյութեր հեղուկներ | հատ | 48 | **Ամանեղեն լվանալու հեղուկ Ֆերի կամ նրան համարժեք** – 1 լիտրանոց տարաներով. ոչ ալերգիկ, |
| | | հատ | 120 | **Լվացքի փոշի Բինգո կամ նրան համարժեք**, 450-500 գ- Սպիտակ, բաց դեղնավուն կամ գունավորած հատիկավոր փոշի: Փոշու զանգվածային մասը ոչ ավել 5 %, pH-ը՝ 7,5-11,5, ֆոսֆորաթթվական աղերի զանգվածային մասը ոչ ավելի 22 %, փրփրագոյացման ունակությունը (ցածր փրփրագոյացնող միջոցների համար) ոչ ավել 200 մմ, փրփուրի կայունությունը ոչ ավելի 0,3 միավոր, լվացող ունակությունը ոչ պակաս 85 %, սպիտակեցնող ունակությունը (քիմիական սպիտակեցնող նյութեր պարունակող միջոցների համար) ոչ պակաս 80 %: Անվտանգությունը, մակնշումը և փաթեթավորումը՝ ըստ ՀՀ կառավարության 2004թ. դեկտեմբերի 16-ի N 1795-Ն որոշմամբ հաստատված "Մակերևութաակտիվ միջոցների և մակերևութաակտիվ նյութեր պարունակող լվացող և մաքրող միջոցների տեխնիկական կանոնակարգի" համաձայն: |
| | | հատ | 120 | **Ժավել** – տեղական արտադրության 1 լիտրանոց տարաներով |
| | | հատ | 120 | **Կոմետ ֆիրմայի** – փոշի , 0,5 լիտր տարողությամբ |
| | | հատ | 120 | **Մաքրող միջոց Damestos** – հեղուկ 0,5 լիտր տարողություններով |

| | | | | |
|---|---|---|---|---|
| | | հատ | 80 | Ապակի մաքրելու հեղուկ Բինգո կամ նրան համարժեք- 550 մլ տարողությամբ |
| 3 | Մաքրելու ջնջոց, շոր | հատ | 200 | **Լաթ սեղանի հասարակ** – տրիկոտաժային կամ հյուսվածքային բամբակյա հումքից, ոչ պակաս 15x25 սմ-ից |
| | | հատ | 80 | **Լաթ հատակի հասարակ** - տրիկոտաժային կամ հյուսվածքային բամբակյա հումքից, ոչ պակաս 40X60 սմ-ից |
| | | հատ | 40 | **Լաթ միկրոֆիբրա** - տրիկոտաժային կամ հյուսվածքային բամբակյա հումքից, ոչ պակաս 50X50 սմ-ից |
| | | հատ | 80 | **Սպունգ վիլեդա սպասք լվանալու** - Ուղղանկյունաձև, երկարությունը 120 մմ, լայնությունը 70մմ, հաստությունը 25մմ, մի կողմից երեսապատված արհեստական կտորով: |
| 4 | Զուգարանի Թուղթ | հատ | 1600 | **<<Ռեգինա>> ֆիրմայի կամ նրան համարժեք** - եռաշերտ, 9,8սմX12,5սմ, 150 թերթիկ, երկ. 18,75մ, պատրաստված գրելու թղթից, լրագրաթղթից և այլ թղթերի թափոններից, թույլատրված սանիտարահիգիենիկ նշանակության ապրանքներ պատրաստելու համար: Անվտանգությունը, փաթեթավորումը և մակնշումը` ըստ ՀՀ կառավարության 2006 թ. հոկտեմբերի 19-ի N 1546-Ն որոշմամբ հաստատված "Կենցաղային և սանիտարահիգիենիկ նշանակության թղթե և քիմիական թելքերից ապրանքներին ներկայացվող պահանջների տեխնիկական կանոնակարգի" |
| 5 | Անձեռոցիկներ | հատ | 100 | **<<Տենդեռ>> մաքսի կամ նրան համարժեք** - Անձեռոցիկ սեղանի` երկշերտ, , թղթի 1 մ2 մակերեսի զանգվածը` 20 գ, խոնավությունը` 7,0 %, 100 հատանոց տուփերով, փափուկ թղթից: Անվտանգությունը, մակնշումը և փաթեթավորումը` ըստ ՀՀ կառավարության 2006 թ. հոկտեմբերի 19-ի N 1546-Ն որոշմամբ հաստատված "Կենցաղային և սանիտարահիգիենիկ նշանակության թղթե և քիմիական թելքերից ապրանքներին ներկայացվող պահանջների տեխնիկական կանոնակարգի": |
| | | հատ | 600 | **<<Սելպակ>> կամ նրան համարժեք** - Անձեռոցիկ սեղանի` երկշերտ, , թղթի 1 մ2 մակերեսի զանգվածը` 20 գ, խոնավությունը` 7,0 %, 50 կամ 70 հատանոց տուփերով, փափուկ թղթից: Անվտանգությունը, մակնշումը և փաթեթավորումը` ըստ ՀՀ կառավարության 2006 թ. հոկտեմբերի 19-ի N 1546-Ն որոշմամբ հաստատված "Կենցաղային և սանիտարահիգիենիկ նշանակության թղթե և քիմիական թելքերից ապրանքներին ներկայացվող պահանջների տեխնիկական կանոնակարգի" |
| 6 | Թղթյա սրբիչներ դիսպենսեր սարքի համար | հատ | 60 | **<<Կլենեքս>> տեսակի** – գլանափաթեթ 304 մ |
| | | հատ | 140 | **<<Սկոտ Սլիմ>> տեսակի** –գլանափաթեթ 165 մ |
| 7 | ավել | հատ | 60 | Սովորական սենյակի հատակ մաքրելու համար ,բնական, տեղական արտադրության քաշը չոր վիճակում 250-500 գրամ, երկարությունը 85-90 սմ, ավլող մասի լայնքը 35-40 սմ |
| 8 | Հատակի և կահույքի փայլեցման միջոցներ | հատ | 40 | Հատակի փայլեցնող շոր Ամիգո ֆիրմայի կամ նրան համարժեք- 60x80 սմ չափսի |
| | | հատ | 40 | Մոպտեմա ֆիրմայի կամ նրան համարժեք հատակափայտի թելեր, հյուսվածքային բամբակյա հումքից: |
| | | հատ | 12 | Կահույքի փայլեցման միջոցներ Պօլօ տեսակի- փայլեցնող միջոց կահույքի համար, աերոզոլային փաթաթվածքով: |
| | | հատ | 80 | Հատակի հեղուկ Էմսալ – 1 լիտրանոց |
| 9 | Աղբի տոպրակներ | հատ | 3360 | Ամիգո տեսակի ֆիրմայի կամ նրան համարժեք 60լ - Աղբի պոլիէթիլենային |

| | | | | |
|---|---|---|---|---|
| | | | | տոպրակներ `սև գույնի աղբը թափելու համար |
| | | հատ | 480 | Ամիգո տեսակի ֆիրմայի կամ նրան համարժեք 120լ - Աղբի պոլիէթիլենային տոպրակներ `սև գույնի աղբը թափելու համար |
| 10 | Տնտեսական ձեռնոցներ | հատ | 80 | Վիլեդա ֆիրմայի տարբեր չափսերի, պոլիմերային հումքից, ոչ ալերգիկ |
| 11 | սրբիչներ | հատ | 20 | Խոհանոցի սրբիչ վաֆլենման, պատրաստված բամբակից,ոչ պակաս երկարությունը 50 սմ, լայնությունը 40 սմ: |
| | | հատ | 60 | Ռեգինա ֆիրմայի թղթից , 6 կամ 12 հատանոց գլանափաթեթներով, անվտանգությունը, փաթեթավորումը և մակնշումը` ըստ ՀՀ կառավարության 2006 թ. հոկտեմբերի 19-ի N 1546-Ն որոշմամբ հաստատված "Կենցաղային և սանիտարահիգիենիկ նշանակության թղթե և քիմիական թելքերից ապրանքներին ներկայացվող պահանջների տեխնիկական կանոնակարգի" |
| 12 | Խցանում հանող հեղուկ | հատ | 40 | Միստեր մուսկուլ տեսակի 0,6 կգ տարողությամբ խցանում հանող հեղուկ |
| 13 | Սրճեփ | հատ | 5 | Էլեկտրական 5 մեծ |
| | | հատ | 5 | Էլեկտրական 5 փոքր |
| 14 | Հատակի շոր հատակափայտի հետ միասին | հատ | 40 | Վիլեդա ֆիրմայի կամ նրան համարժեք հատակափայտի համար շոր |
| | | հատ | 4 | Վիլեդա ֆիրմայի կամ նրան համարժեք հատակափայտի կոթ |
| 15 | օդաթարմացուցիչ | հատ | 16 | 250մլ, փակ սենյակի հոտի թարմացման համար, վակումային բալոնիկով, թարմ հոտով,ոչ ծաղկային: |
| | | հատ | 8 | 300մլ, փակ սենյակի հոտի թարմացման համար, վակումային բալոնիկով, թարմ հոտով,ոչ ծաղկային |
| | | | | Մատակարարումները պետք կատարվեն միայն գնորդի հայտերի հիման վրա |

**Սույն տեխնիկական բնութագրին չհամապատասխանող մասնակցի հայտը կմերժվի:**

**ԳՆՈՐԴ**

<<Երևանի ՋԷԿ>> ՓԲԸ
ք. Երևան, Արին Բերդի 3-րդ նրբ, 3
ՀՎՀՀ 02205028
Հ/Հ 2473600002170010
<<Արդշինինվեստ բանկ>> ՓԲԸ
Շենգավիթ մասնաճյուղ
Գլխավոր տնօրեն՝

-----------------------------
(ստորագրություն)
Կ.Տ

**ՎԱՃԱՌՈՂ**

-----------------------------
(ստորագրություն)
Կ.Տ

Հավելված 2
___ ___________ 2014թ.կնքված
պայմանագրի

# ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

| Չափ համա րը | Չափաբ-նի անվանումը | Ապրանքի անվանումը | Միավորի գինը | Չափման միավորը | Քանակը / նախատեսված է 2014թ. համար/ | | | | Ընդամենը | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | | | | I եռամսյակ | II եռամսյակ | III եռամսյակ | IV եռամսյակ | Քանակը | Գինը |
| 1 | Օճառ | Չորսուների ձևերով 100 գ | | հատ | 3 | 3 | 3 | 3 | 12 | |
| | | Հեղուկ օճառ Հոբբի | | հատ | 60 | 60 | 60 | 60 | 240 | |
| 2 | Լվացող մաքրող նյութեր, հեղուկներ | Ամանեղեն լվանալու հեղուկ Ֆերի կամ նրան համարժեք | | հատ | 12 | 12 | 12 | 12 | 48 | |
| | | Լվացքի փոշի Բինգո կամ նրան համարժեք | | հատ | 30 | 30 | 30 | 30 | 120 | |
| | | Ժավել | | հատ | 30 | 30 | 30 | 30 | 120 | |
| | | Կոմետ | | հատ | 30 | 30 | 30 | 30 | 120 | |
| | | Մաքրող միջոց Damestos | | հատ | 30 | 30 | 30 | 30 | 120 | |
| | | Ապակի մաքրելու հեղուկ Բինգո կամ նրան համարժեք | | հատ | 20 | 20 | 20 | 20 | 80 | |
| 3 | Մաքրելու ջնջոց, շոր | Լաթ սեղանի հասարակ | | հատ | 50 | 50 | 50 | 50 | 200 | |
| | | Լաթ հատակի հասարակ | | հատ | 20 | 20 | 20 | 20 | 80 | |
| | | Լաթ միկրոֆիբրա | | հատ | 10 | 10 | 10 | 10 | 40 | |
| | | Սպունգ սպասք լվանալու | | հատ | 10 | 10 | 10 | 10 | 80 | |

| | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| 4 | Զուգարանի Թուղթ | <<Ռեգինա>> ֆիրմայի կամ նրան համարժեք | | հատ | 400 | 400 | 400 | 400 | 1600 | |
| 5 | Անձեռոցիկներ | <<Տենդեր>> մաքսի կամ նրան համարժեք | | հատ | 25 | 25 | 25 | 25 | 100 | |
| | | <<Սելպակ>> կամ նրան համարժեք - | | հատ | 150 | 150 | 150 | 150 | 600 | |
| 6 | Թղթյա սրբիչներ դիսպենսեր սարքի համար | <<Կլեններս>> տեսակի | | հատ | 15 | 15 | 15 | 15 | 60 | |
| | | <<Սկօտ Սլիմ>> տեսակի – | | հատ | 35 | 35 | 35 | 35 | 140 | |
| 7 | ավել | ավել | | հատ | 15 | 15 | 15 | 15 | 60 | |
| 8 | Հատակի և կահույքի փայլեցման միջոցներ | Հատակի փայլեցնող շոր Ամիգո ֆիրմայի | | հատ | 10 | 10 | 10 | 10 | 40 | |
| | | Մոպտեմա ֆիրմայի կամ նրան համարժեք հատակափայտի թելեր | | հատ | 10 | 10 | 10 | 10 | 40 | |
| | | Կահույքի փայլեցման միջոցներ Պոլօ տեսակի | | հատ | 3 | 3 | 3 | 3 | 12 | |
| | | Հատակի հեղուկ էմալ | | հատ | 20 | 20 | 20 | 20 | 80 | |
| 9 | Աղբի տոպրակներ | Ամիգո տեսակի ֆիրմայի կամ նրան համարժեք 60լ | | հատ | 840 | 840 | 840 | 840 | 3360 | |
| | | Ամիգո տեսակի ֆիրմայի կամ նրան համարժեք 120լ - | | հատ | 120 | 120 | 120 | 120 | 480 | |

| | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| 10 | Ծածկեսական ձեռոցներ | Վիելդա ֆիրմայի տարբեր չափսերի | | հատ | 20 | 20 | 20 | 20 | 80 | |
| 11 | սրբիչներ | Խոհանոցի սրբիչ վաֆլենման | | հատ | 5 | 5 | 5 | 5 | 20 | |
| | | Ռեգինա ֆիրմայի թղթից, 6 կամ 12 հատանոց գլանափաթեթնե րով, | | հատ | 15 | 15 | 15 | 15 | 60 | |
| 12 | Խցանում հանող հեղուկ | Միստեր մուսկուլ տիպի | | հատ | 10 | 10 | 10 | 10 | 40 | |
| 13 | սրճեփ | մեծ | | հատ | 2 | 1 | 1 | 1 | 5 | |
| | | փոքր | | հատ | 2 | 1 | 1 | 1 | 5 | |
| 14 | Հատակի շոր հատակափ այտի հետ միասին | Վիլեդա ֆիրմայի կամ նրան համարժեք հատակափայտի համար շոր | | հատ | 10 | 10 | 10 | 10 | 40 | |
| | | Վիլեդա ֆիրմայի կամ նրան համարժեք հատակափայտի կոթ | | հատ | 1 | 1 | 1 | 1 | 4 | |
| 15 | օդաթարմաց ուցիչ | 250մլ, | | հատ | 4 | 4 | 4 | 4 | 16 | |
| | | 300մլ, | | հատ | 2 | 2 | 2 | 2 | 8 | |
| ԸՆԴԱՄԵՆԸ | | | | | | | | | | |

| **ԳՆՈՐԴ** | **ՎԱՃԱՌՈՂ** |
| --- | --- |
| <<Երևանի ՋԷԿ>> ՓԲԸ<br>ք. Երևան, Արին Բերդի 3-րդ նրբ, 3<br>ՀՎՀՀ 02205028<br>Հ/Հ 2473600002170010<br><<Արդշինինվեստ բանկ>> ՓԲԸ<br>Շենգավիթ մասնաճյուղ<br>Գլխավոր տնօրեն՝ | |
| ------------------------------<br>(ստորագրություն)<br>Կ.Տ | ------------------------------<br>(ստորագրություն)<br>Կ.Տ |

Հավելված 3
___ ___________ 2014թ.կնքված
պայմանագրի

## ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

| Գնման առարկայի անվանումը | Սույն պայմանագրի վճարման կարգը կսահմանվի տվյալ պայմանագրի անբաժանելի մասը կազմող լրացուցիչ համաձայնագրով՝ անհրաժեշտ ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում |
|---|---|
| | |
| | |
| | |

**ԳՆՈՐԴ**
<<Երևանի ՋԷԿ>> ՓԲԸ
ք. Երևան, Արին Բերդի 3-րդ նրբ, 3
ՀՎՀՀ 02205028
Հ/Հ 2473600002170010
<<Արդշինինվեստ բանկ>> ՓԲԸ
Շենգավիթ մասնաճյուղ
Գլխավոր տնօրեն՝

-----------------------------
(ստորագրություն)
Կ.Տ

**ՎԱՃԱՌՈՂ**

-----------------------------
(ստորագրություն)
Կ.Տ

Հավելված 4
___ ___________ 2014թ. կնքված
պայմանագրի

**Գնորդ** **Վաճառող**

## Ա Ր Ձ Ա Ն Ա Գ Ր Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն N ___
## ՀԱՆՁՆՄԱՆ-ԸՆԴՈՒՆՄԱՆ

«_______« «____________________« 20 թ.

Պայմանագրի անվանումը՝ --------------------------------------------------------------------------------

Պայմանագրի կնքման ամսաթիվը՝ «________« «__________________« 20 թ.

Պայմանագրի համարը՝__________________________.

Գնորդը՝ ի դեմս________________________և Վաճառողը՝ ի դեմս__________________________________, հիմք ընդունելով, որ պայմանագրով նախատեսված՝ ստորև նշված մատակարարումները (այսուհետև՝ մատակարարումներ) համապատասխանում են պայմանագրով ամրագրված տեխնիկական բնութագրերին և գնման ժամանակացույցին՝ կազմեցին սույն արձանագրությունը հետևյալի մասին.

Պայմանագրի շրջանակներում Վաճառողը «___« «___________« 20 թ–ից «____« «___________« 20 թ. ընկած ժամանակահատվածում իրականացրել է հետևյալ մատակարարումները.

| Գնման առարկայի անվանումը | Գնման առարկայի քանակական ցուցանիշները | Մատակարա-րումների կատարման ժամկետը | Վճարման ենթակա գումարը (հազար դրամ) | Վճարման ժամկետը (ըստ ժամանակա-ցույցի) |
| --- | --- | --- | --- | --- |
| | | | | |
| **Ընդամենը** | ------------- | ------------- | | ------------- |

Վերոհիշյալ աշխատանքների կատարման վերաբերյալ բոլոր հաշիվ-ապրանքագրերը հանդիսանում են սույն արձանագրության բաղկացուցիչ մասը և կցվում են:

**Մատակարարումը հանձնեց**
(ստորագրություն)
ազգանուն ___________________________
Կ.Տ

**Մանակարարումը ընդունեց**
(ստորագրություն)
ազգանուն ___________________________
Կ.Տ